ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2013 թվականի ,,Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի ,,4729 սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից,, հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզպետարանին հատկացված միջոցներից 35.000 /երեսունհինգ հազար/ դրամ աջակցության կարգով հատկացնել մարզի Կարմիրգյուղ համայնքի բնակիչ Սևակ Մկրտչյանին՝ ս/թ հուլիսի 4-ից 7-ը Վրաստանի Հանրապետության Գորիի տարածաշրջանում բռնցքամարտի միջազգային մրցաշարին մասնակցելու ճանապարհածախսը հոգալու համար:
2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բաղեյանին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել Կարմիրգյուղ համայնքի բնակիչ Սևակ Մկրտչյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ